# ԿԱՆԱՉ (ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ) ԳՆՈՒՄՆԵՐ

# Ցանկ

- Կանաչ Գնումներ
- Կանաչ Գնումներին Առնչվող ԵՄ  Փաստաթղթեր
- ՀՀ Հանրային Գնումները
- Կանաչ Գնումները Հայաստանի Հանրապետությունում
- Առաջնային Ոլորտները
- Հիմնական Խոչընդոտները
- Կանաչ Գնումների Քաղաքականության Մշակում
- Կանաչ Գնումների Իրականացման Ընթացակարգը
- Հանրային և Մասնավոր Հատվածների Համագործակցություն

# Կանաչ Գնումներ

այն ապրանքների կամ ծառայությունների գնումները, որոնք, համեմատած նույն նպատակին ծառայող այլ գնման առարկաների, ունեն:

դրական կամ նվազ բացասական ազդեցություն շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա՝

միաժամանակ ունենալով մրցունակ կյանքի ցիկլի գին:

Գնման առարկայի կյանքի ցիկլի գինը սահմանվում է որպես դրա ձեռքբերման, շահագործման և հեռացման ծախսերի գումար:

# Կանաչ Գնումներին Առնչվող ԵՄ  Փաստաթղթեր

«Եվրոպա 2020» ռազմավարություն

Կանոնակարգ No 106/2008: Energy Star Regulation (2008)

Դիրեկտիվ 2010/30/EU: Energy Labelling Directive (2010)

Դիրեկտիվ 2012/27/EU: Energy Efficiency Directive (2012)

# Հանրային Գնումները ՀՀ-ում

Հանրային գնումների համակարգը մեծ դեր է կատարում Հայաստանի տնտեսության մեջ:

2015թ. ՀՀ-ում պետական մարմինների կողմից իրականացված գնումների ընդհանուր ծավալը կազմել է մոտ 430 մլրդ. ՀՀ դրամ, ինչը կազմում է պետբյուջեի ընդհանուր ծախսերի մոտ 30%-ը, իսկ ՀՆԱ-ի մոտ 8.6%-ը:

Հանրային գնումների ուղղորդումը դեպի <<Կանաչ գնումներ>> կարող է զգալիորեն խթանել էկոլոգիապես ավելի մաքուր ապրանքների արտադրությունը և իրացումը:

Կանաչ գնումները ներկայումս կրում են բացառապես կամավոր բնույթ:

2011թ.-ից ուժի մեջ է մտել «Գնումների մասին» ՀՀ օրենքը, որը, սակայն, չի սահմանում կանաչ գնումները խրախուսելու չափորոշիչներ:

Դրական տեղաշարժեր կան այլ իրավական ակտերի և զարգացման ծրագրերի շրջանակներում:

# Առաջնային Ոլորտները

1.Շինարարություն (հումքային նյութեր, շինարարական ապրանքներ, սարքավորումներ)

2.Սննդի եւ հասարակական սննդի ծառայություններ

3.Տրանսպորտ եւ տրանսպորտային ծառայություններ

4.Էներգիա (ներառյալ էլեկտրաէներգիա, ջեռուցում եւ հովացում` ՎԷ աղբյուրներից)

5.Գրասենյակային մեքենաներ եւ սարքավորումներ

6.Հագուստ, համազգեստ եւ այլ տեքստիլ

7.Թուղթ եւ տպագրական ծառայություններ

8.Կահույք

9.Մաքրող ապրանքներ եւ ծառայություններ

10.Առողջապահության ոլորտում օգտագործվող սարքավորումներ

# Հիմնական խոչընդոտները

Սահմանափակ էկոլոգիական չափանիշներ ապրանքների և ծառայությունների համար: Դրանց առկայության դեպքում՝ անբավարար հրապարակայնություն:

Էկոլոգիապես մաքուր ապրանքների և ծառայությունների մասին ցածր իրազեկվածություն:

Ապրանքների կյանքի ցիկլի ծախսերի, ինչպես նաև էկոլոգիապես մաքուր ապրանքների համեմատական ծախսերի մասին սահմանափակ տեղեկատվություն:

Քաղաքական օժանդակության պակաս:

Տեղական ինքնակառավարման մարմինների միջև կոորդինացված փորձի փոխանակման պակաս:

# Կանաչ Գնումների Քաղաքականության Մշակում



# Կանաչ Գնումների Իրականացման Ընթացակարգը

1. Կարիքի հայտնաբերում
2. Վերջնական օգտագործողի պահանջների սահմանում և վերանայում
3. Հասանելի բյուջեի հստակեցում
4. Շուկայում առկա առաջարկի հայտնաբերում
5. Գնումների լավագույն գործընթացի որոշում
6. Մրցույթի նախագծում և անցկացում
7. Պայմանագրի կնքում
8. Պայմանագրի կառավարում և վերանայում

# Հանրային և Մասնավոր Հատվածների Համագործակցություն

Համայնքներն ունեն լիազորություններ՝ համայնքային ծառայությունների տրամադրումը պատվիրակելու մասնավոր կազմակերպություններին:

Համայնքներ, համայնքային կազմակերպու_ թյուններ

+

Մասնավոր հատված

Բնակչություն

1. Աղբահանություն,
2. Սանիտարական մաքրում,
3. Համայնքի տարածքի կանաչապատում,
4. Համայնքի բարեկարգում,
5. Ճանապարհների կառուցում և շահագործում,
6. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենների տրամադրում և այլն:

# Համայնք-Մասնավոր Հատված Գործընկերության (ՀՄԳ) Հիմնական Տարբերակները

| | |
|---|---|
| Կառավարման պայմանագրեր | • Համանքը պայմանագիր է կնքում մասնավոր ընկերության հետ, որպեսզի վերջինս համայնքի անունից և համայնքի գույքով ծառայություններ մատուցի համայնքի բնակիչներին և ծառայությունների շահառուներին: |
| Վարձակալական (լիզինգային) պայմանագրեր | • Լիզինգային պայմանագիրը, երբ վարձակալը, լիզինգային պայմանագրի ավարտից հետո, ստանում է գույքի նկատմամբ սեփականության իրավունք<br>• Վարձակալական պայմանագիր, երբ վարձակալը, վարձակալական պայմանագրի ժամկետի ավարտից հետո ողջ գույքը փոխանցում է համայնքին |
| Կոնցեսիոն պայմանագրեր | • Մասնավոր գործընկերը (կոնցեսիոները) իրավունք է ստանում երկարաժամկետ կտրվածքով տնօրինելու համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ տրամադրելու համայնքային **վճարովի** ծառայություններ՝ սեփական միջոցների հաշվին:<br>• Գույքը տնօրինելու իրավունքի դիմաց մասնավորը կոնցեսիոն վճար է վճարում գույքի սեփականատեր համայնքին: |
| Ներդրումներ ենթադրող գործընկերություն | • Համայնք-մասնավոր հատված համագործակցության առանցքային խնդիրներ են դառնում նոր օբյեկտի կառուցման ֆինանսավորումը, տնօրինումը և օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքը ծառայության մատուցման ընթացքում և դրանից հետո: |

# ՀՄԳ Ծրագրերի Իրականացման Պարտադիր Պահանջները

- Մասնավոր ընկերությունները պետք է ներգրավվեն համաձայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների:
- Տեխնիկական հանձնարարականում պետք է հնարավորինս մանրամասն ներկայացվեն ՀՄ գործընկերությամբ ակնկալվող որակական և քանակական (ներառյալ ֆինանսական) արդյունքները, արդյունքների գնահատման չափանիշները:
- ՀՄԳ ծրագրերի համար պետք է կազմվի մանրամասն և համակողմանի բիզնես պլան, որտեղ մասնավոր կողմը պետք է ներկայացնի իր մոտեցումները ծրագրի իրականացման նկատմամբ, պահանջվող ներդրումները, դրանց իրականացման ժամանակացույցը:
- ՀՄԳ իրականացման պայմանագրի մեջ պետք է մանրամասնությամբ ամրագրվեն կողմերի իրավունքներն ու պարտավորությունները: Պետք է նշվի, որ համայնքը հանդիսանում է պատվիրատու, երաշխավորող, կարգավորող և վերահսկող կողմ:
- Որևէ ՀՄԳ ծրագիր չի կարող համայնքի համար ֆինանսապես ավելի անբարենպաստ լինել, քան եթե ծառայությունները մատուցվեին համայնքի կամ համայնքային կազմակերպության միջոցով:
- Համայնքի բնակիչներից որևէ ծառայության դիմաց գանձվող վճարները կարող են բարձրացվել միայն ծառայության որակի բարձրացումից հետո:
- Կողմերի միջև կնքվող պայմանագիրը պետք է հստակ սահմանի պայմանագրի դադարեցման և կրած ծախսերի փոխհատուցման պահանջ ներկայացնելու հիմքերը:

# ՀՄԳ և Կանաչ Գնումները

Կանաչ գնումների վերաբերյալ առաջնահերթություննե րի սահմանումից հետո, համայնքը կարող է դրանք ընդգրկել ՀՄԳ ծրագրերի համար կազմվող համակողմանի բիզնես պլանի չափանիշների մեջ:

ՀՄԳ արդյունքում կիրականացվեն ծրագրեր որոնք կունենան կյանքի ցիկլի մրցունակ գին միաժամանակ ունենալով նվազագույն ազդեցություն շրջակա միջավայրի վրա:

ղինե Պասոյան
ծագիր տնօրեն
րգախնամողության
ակցման Հիմնադրամ

# Շնորհակալություն




Էներգախնայողության աջակցման հիմնադրամ
Էլ-փոստ՝info@esfarmenia.org
Կայք՝ www.esfarmenia.org